



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Բ. ՓԵՏՐՎԱՐ. ՇՐՋ. ԺԳ. 1880 ՏԱՐԻ ԺԲ. ՄԱՐՏ. ԹԻԻ Գ.

ԻՄԱՍՏՈՒՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԻՒՐ ԳԼԽԻՆ ԵԿԱԾ ԲԱՆԵՐԻ ՀԵՏ:

Գովեցէք, հողեղէն մարդիկ, որչափ սիրտներդ կամենումէ ձեր հանձարաւոր արհեստաւորների արած ու թողած միշտ զարմանալի գործերը. գովելով երկինքը հանեցէք նոցա ստեղծող միտքն ու խելքը, որով կարողացել են սառն ու անշունչ մարմարիոնին կեանք ու կենդանութիւն տալ, որոնց ձեռից եկել է ներկերով մի գեղեցիկ ու ծաղկած աշխարհ իւրեանց վրձինի ծայրով իբր ստեղծել. ի՞նչ են նոցա երեսի գործերը, եթէ ոչ Աստուծու ստեղծած ու աշխարհիս վերայ կեանք ու կենդանութիւն ունեցող ամենայն գեղեցիկ արարածի անկեանք, անշունչ ու անհոգի պատկերն ու նմանութիւնը միայն, կամ թէ ամբողջ այս տիեզերքի վերայ գոյացած ու գտնված արարածների արտաքին պատկերի գծադրութիւններն ու անկեանք ձեւերը, որոնք այնպիսի նմանութիւններն են, որ իսկական արարածի կատարելութիւններին երբէք չեն կարող հասնել:

Գովեցէք, որչափ կամենումէք, հողեղէն մարդիկ, ձեր իմաստունների մեծ իմաստութիւնն, թէ ի՞նչպէս նոքա իւրեանց աշխատութեամբ ծաղկեցրին զանազան գիտութիւններ, ի՞նչպէս շատացրին ու աւելացրին եղած գիւտերը, ի՞նչպէս քաղաքների ու ազգերի բարօրութիւնը աւելացնելու ջանք արին ու յաջողեցան: Ի՞նչպէս սահմանափակ էր նոցա գործունէութեան չրջանը, Թամանակները փոխվեցան ու քանդվեցաւ ոչնչացաւ նոցա արածն ու գլուխ բերածները, որ կարծումէին, թէ որքան ևս աշխարհս փոխվի, իւրեանց գործերն շատ երկար պիտի մնան շատ ու շատ տարիներ ու դարեր, հաստատ ու անսասան պիտի մնան իւրեանց շինածներն, կամ միշտ պիտի պահվին իւրեանց դրած կարգ ու կանոններն: Միայն Մէկը կայ,

Որի գործն ու գործունեութիւնը պիտի տեսի, եթէ երկինքն ու երկիրս ևս անցնին՝ ն:

Ո՞վ է կարողացել Յիսուս Քրիստոսի նման իւր զօրաւոր խօսքով կենդանիների բոլոր աշխարհը շարժել, բոլոր այս աշխարհս փոխել, Ո՞վ մարդիկների սրտից ու մտքից հանեց, ցրուեց հալածեց նոցա մոլորութեան երազներն և նոցա հոգիները իւրեանց սկզբնական արժանաւորութեանն ու նշանակութեանն դարձեալ տարաւ: Ո՞վ Նորա նման պարզ ու պայծառ կերպով մեզ յայտնեց մեզ սիրող Աստուծուն և մահկանացու մարդի միտքը բացեց, որ հաշտ ու համաձայն ապրի ինքն իւր հետ և իւրեան շրջապատող ընտելեան հետ: Ո՞վ Նորա նման Աստուծու լեզուով խօսեց, որ ժողովրդի • ամենահասարակ մարդն անգամ կարողացաւ հասկանալ և ամենաիմաստուն մարդն ևս Նորա խօսքերից ամենամեծ բանը սովորեց: Ո՞վ Նորա նման երկիրս երկինքի հետ, մարդկութիւնը Աստուածութեան հետ դարձեալ հաշտեցրեց:

Այս մեծ գործը կատարելը Նորա կեանքի ամենամեծ նպատակն էր. բայց այնպէս էր երևում, որ աշխարհս Նորա ընդդէմ վրդովումէ, Նորան սաստիկ ընդդիմանումէ և Նորա սուրբ ձեռնարկութեանն օրգելք է լինում: Նորա բոլոր կեանքը մշտական պատերազմ էր սարսափելի դժուարութիւնների, նեղութիւնների, վտանգների վիշտերի հետ: Դիմացաւ քաջութեամբ այս պատերազմին և վերջապէս պատերազմից յաղթող դուրս եկաւ: Նորան, որ երբեմն տեղ չէր գտնում, որ Իւր զլուխը դնել կարողանայ, արդէն աշխարհիս ամենայն կողմերն իւրեանց տաճարները նուիրեցին: Նորա առաջին, Որին մի ժամանակ հասարակ ժողովրդի ամենաստոր մարդն ծաղր էր անում, այնուհետև աշխարհի թագաւորներն ծուներ զրին՝ ն:

Ինչպէս որ Քրիստոս մարդկային ամենաբարձր իմաստութեան նախագաղափարն էր, այնպէս ևս Ճշմարիտ իմաստուն պիտի լինի կեանքով ու գործով նաև ամենայն Ճշմարիտ քրիստոնեայ. և կճանաչվի նորանով, որ կունենայ զօրաւոր բարի կամք, հոգու յաղթող զօրութիւն, որով կընդդիմանայ ամենայն մարմնաւոր ու զգայական հրապոյրներին, ամենայն արգելքների ու դժուարութիւնների և կանէ միայն այն բանը, ինչ որ արդար, օրինաւոր, ճշմարիտ, իւր պարտաւորութիւններին համաձայն և Աստուծուն հաճոյ և ընդունելի ճանաչած է: Վարդը են նորա ձեռներն ու ոտերը շղթայ ձգել, բայց ոչ թէ նորա մտքի, սրտի ու հոգու օրէնքներն ու կանոններն կապել ու կատարել չթողնել. կարելի է նորա մարմինը սպանել, բայց հոգին չէ:

Այն հոգու մեծութիւնն, որով իմաստունն կեանքի մրրիկներին է հանդիպում, նորա լաւ համոզմունքի այն պատերազմն, որ նա անումէ, իւրեան ի զուր յաղթել ու կոտրել կամեցող արկածների հետ, ամեն ժամանակ արժանի է մեր մեծարանքին: Մի աստուածային բան կայ այնպիսի մարդի մէջ և նորա վարքի մէջ, որ նա իւր զգայական տկարու-

Թիւններից յաղթվելու տեղը, յաղթումէ իւր մարմինն ու նորա ցանկութիւններին. որ նա, ձախորդութիւններից ստիպված, իւր կեանքի օրէնքներն ու կանոնները խախտելու և ինքն թուլանալու տեղը, հաստատ մնալով և չթուլանալով, ընդդիմանումէ մինչև վերջը և իւր գլխին նկած բանից բարձր է պահում իւրեան, Այն ժամանակ ամեն մի մարդ հասկանումէ, որ յիրաւի՝ այդպիսի մարդը մի հասարակ հոգեղէն մարդ չէ, այս այն պատահմունքի անկամք արարածը չէ ամենեին, նորա մէջ մի զօրութիւն կայ, որ Աստուծուն է, նա Աստուծու մարդ է և յաւիտենական կեանքի արժանի:

Աշխարհիս Փրկչի ճանապարհով գնացող իմաստունի հոգու զօրութիւնը լաւ երևումէ նորանից, որ նա երկար ու լաւ մտածմունքից յառաջ եկած, հաստատ ու անփոփոխ կամք ունի և կեանքի առաքինի կանոններ, և այդպիսի անյողողող կամքով ու առաքինի կեանքի կանոններով ընդդիմանումէ նա ամենայն ներքին և արտաքին բռնութեան ու ճնշման, Իւր հոգու ոյժը ցոյց է տալիս նա ամենից առաջ իւր իսկ կիրքերի ընդդէմ՝ ունեցած պատերազմում, այն կիրքերի, որոնք իւր մէջ եղած առաքինութիւնն կամենումեն խախտեն. նա ցոյց է տալիս իւր հոգու զօրութիւնն այն աներկիւղ սրտով, որով գնումէ այն վտանգների տառն, որոնց պիտի հանդիպի ճշմարտութեան համար. նա ցոյց է տալիս հոգու զօրութիւնն այն համբերութեամբ, որով տանումէ այն ամենայն չարիքը, որոնց յաղթել իւր յոյժից բարձր է, իւր հոգու յոյժն յայտնվումէ նաև նորա սրտի այն անվերջով հանդարտութենից, որ նորա երեսիցն յայտնի երևումէ, պատճառ որ զիտէ, որ այն է միայն կամեցել, ինչ որ Աստուծու կամքն է և նորան ընդունելի. ուրեմն նորա սիրտն հանգիստ է բոլորովն և անխռով խաղաղ ծովի նման:

Բայց անմիտների կամ անդգամների յամառութիւնն ընդհակառակն յայտնի կերպով երևումէ նորանից, որ նոցա հաստատ ու անփոփոխ կամքը իւրեանց անձի շահերի համար է, որոնց համար հոգի են տալիս. պարզ երևումէ նոյնպէս նոցա հաստատ մնալումն այն կարծիքների մէջ, որ նոցա համար մի և նոյն է թէ հանգամանքի փոխվելուն նայելով, կարող են ճշմարիտ լինել կամ սուտ, ուղիղ կամ սխալ ու ծուռ, օգտակար կամ վնասակար. ոչ պակաս տեսնվումէ նոցա ինքնահաճ հպարտութեան մէջ, որով ուրիշներին հարկադրումեն, որ իւրեանց կարծիքը, դատողութիւնն, ցանկութիւններն իւրեանց կամքին ծառայեցնեն, ամենեին չհամարձակեն ցոյց տալ, որ նոքա ևս մարդ են, իւրեանց կարծիքն, դատողութիւնն, ցանկութիւններն կարող են ունենալ:

Իմաստունն ոչ զքին չէ հարկադրում, որ իւր լաւ համոզմունքն անպատճառ ընդունէ, բայց և չի թողնի, որ իւրեան ստիպեն, թէ ուրացիր ու մի կողմն դիր այդ քո մտքերդ: Նա բռնութեամբ չէ պահանջում, որ ամեն մարդ այն կանոններով շարժի, որ իւրեան յայտնի են իրրեւ ճշմարիտ ճանաչված կեանքի կանոններ, բայց իւրեան ևս չէ կարող շարժել:

կամ դրդել ոչ յոյսն, ոչ երկիւղը, ոչ մարմնական ցանկութիւնն, ոչ վտանգը, իւր կեանքի կանոնների մէջ թուլանալ, փոխվիլ ու այն բանն անել, որ խղճմտանքի ընդդէմ է: Նա չէ կամենում ստիպող հանգամանքները բռնի փոխիլ. բայց ժամանակի բերմունքի ոյժն ևս չէ կարող նորան այն տեղը հասցնել, որ նա կամայ աւամայ փոխվի, ուրիշ մարդ դառնայ, առաջվանը ծախի ու մի կողմ դնէ, և բոլորովին ուրիշ կերպ մտածէ, ուրիշ կերպ բռնէ ամեն մի իւր գործը, ուրիշ կերպ ապրի քան թէ ինչպէս որ առաջն էր ապրում, պատճառ որ նորա համար միայն այն միտքն, գործն ու կեանքն է լաւ, որ աստուածային է, ճշմարիտ է, արդար է և ուղիղ: Նա խելօքութեամբ միշտ միտք է անում թէ ինչ տեղ է, ինչ ժամանակի ու հանգամանքի մէջ է, ինչ մարդիկների մէջ է, և սոցա համեմատ է շարժում և աշխատում, որ իւր ընդհանրագոյս և աղնիւ նպատակներին տանել կարողանար, բայց իւր այդ նպատակներին հասնելու համար ոչ մի ժամանակ գերի չէ դառնում մարդիկներին կամ ժամանակի հանգամանքներին:

Այսպէս էր շարժում, այսպէս էր վարվում, ապրում ու գործ կատարում աստուածային իմաստունն Յիսուս Քրիստոս: Նա երևելի տան զաւակ չէր, քաղաքական արտօնութիւններ ամենեին չունէր, մեծ հարուստի ևս որդի չէր. որ աչքով անէր, ծառաներ վազելու չէին իսկոյն թէ ինչ է կամենում, կամ թէ ինչ է հրամայում, կամ թէ զօրքեր թափելու չէին նորա չորս կողմն, բայց և այնպէս կամենումէր, որ մի մեծ փոփոխութիւն անէ մարդկային ազգի մէջ. կամենումէր, որ աշխարհիս ամեն կողմը վաղուց շինած կռուքերի սեղանները կործանվին, միայն ճշմարիտ Աստուածը պաշտվի, ամենայն ազգերը միմեանց հետ մի մեծ եղբայրական կապով կապվին, մի թագաւորութիւն լինի երկր'ս վերայ ու երկնքում, Ինչ զարմանալի մեծ բան էր մտքում դրել անելու: «Նազարէթցի հիւսնի որդին չէ՞ սա»: Հարցնումէին ծաղր անելով Նորան այն մարդիկը, որ Նորա աղքատ ու կարօտ կերպով ապրելն տեսնումէին: Նա այնպիսի մի դարի մէջ երևեցաւ, որի նմանը չէր եղել առաջ, որ մարդիկը այնպէս վերջին աստիճանի անձնասէր, փողասէր, փառասէր լինէին, և այդպիսի դարում, այդպիսի ժամանակում Նա քարոզումէր անձնութեացութիւն: Նա այնպիսի դարում յայտնվեցաւ, որ զանազան ազգերի միմեանց դէմ ունեցած ազգային ատելութեան պատերազմներն ու ազաղակներն արձագանք էին տալ'ս շատ տեղ, և Նա սէր էր քարոզում: Իւրեան կատաղի մոլեռանդութեամբ քարշաքաշ խաչելու տարան, Իւր առաքեալներին սպանեցին, և հարիւրաւոր տարիներ զօրեղ Հռոմի կայսրները Նորա եկեղեցին, նորա հետեւողներին ոչնչացնելու, աշխարհիս երեսից սրբելու հրամաններ ու հալածանքներ հանեցին, բայց և այնպէս, դարեր անցնելուց յետոյ, դարձեալ դեռ ևս հնչումէ Նորա աստուածային ձայնը աշխարհիս ամեն երկիրներում ու ամեն ծովերի վերայ:

Ինչ որ միշտ և յաւիտեան ճշմարիտ ու բարի է, թագաւորներին իւրեանց բարձր աթոռում նստած ու արած սաստիկ հրամաններին հարկաւորութիւն չունին, որ զօրութիւն ստանայ, անարգելք յառաջ գնայ ու տեղն առնէ։ Թաւիտեան ճշմարիտն ու բարին ինքն իւր ճանապարհներն կգտնէ ու կբանայ, հասարակ ու չհասկացող ժողովրդի կատաղութիւնը կհանդարտեցնէ, այնպէս կանէ որ ձեռը կթուլանայ ու զէնքը ցած կգնէ։ Իսկ հակառակ կացող յամառ բռնաւորներին իւր առաջը ցած կձգէ, հողի հետ հաւասար կանէ։ Այսպէս մեծ է հոգու, յաւիտենական արդարութեան և անանցանելի ճշմարտութեան ոյժն ու զօրութիւնը։

Յիսուս Քրիստոս անահ, աներկիւղ պատերազմ մտաւ ամեն արգելքների առաջ, նա ոյժ ու բռնութիւն բանեցնելով չէր կռուում իւրեան շրջապատող հանգամանքների հետ, այլ ժամանակներին ու մարդիկներին համեմատ էր վարում, ինչպէս որ էին, որ իւր աստուածային նպատակներին համար։ Այնինչ ևս որ դուրս գալու լինէր, նորա համար նշանակութիւն չունէր ու չէր վախեցնում նորան. նա հաստատ մտքով ու հաստատ կամքով յառաջ տարաւ ու կատարեց իւր առաքելութեան վսեմ նախադիմն. ոչ մի բան նորան չհրապուրեց ու դուրս հանել չկարողացաւ։ Իւր ճանապարհից, ոչ մի բան նորա աչքը չվախեցրեց, կամ նորա սիրտն աչ ձգելով, յետ քաշվել չտուաւ։

Մէկ անգամ չէ, շատ անգամ պատահեցաւ, որ վրդովելու պատրաստ ժողովուրդն նորա չորս կողմն հաւաքվեցաւ։ Պահանջումին նորանից, որ Հռոմի տիեզերական իշխանութիւնն կործանէ, ոչնչացնէ, ու մի ժամանակվայ Դսրայէլի փառաւոր թագաւորական աթոռն դարձեալ հաստատէ։ Հազարաւոր մարդիկ ասումէին նորան թէ պատրաստ են իւրեանց գլուխը մահին տալ, նորա ձեռի ու զրօշակի տակ մտնելով, պատերազմ գնալ, որ կոխ անեն Նրուսաղէմի փառքի համար ու իւրեանց մեծ հայրերի գերեզմանների համար։ Ուսմանա Պաւթի որդւն, օղբ թնդացնող աղաղակը դուրս պրծաւ ու հնչեց նոցա բերաններից, երբ որ նա, իւր միայնութեան մէջ անց կացրած կեանքը թողնելով, ժողովրդով լցված մայրաքաղաքի անհամար բազմութեանը մէջ եկաւ, որ նորա աչքով անելուն էր սպասում, պատրաստ էր գլուխ բարձրացնելու, բայց Քրիստոս իւր կեանքի աստուածային կանոններից ամենեկին դուրս չեկաւ։ Նա արհամարհեց այն զօրքերին, որոնք իւր համար ձեռներն զէնք առնել էին կամենում, արհամարհեց այն թագաւորական աթոռն, որ նորան տալիս էին, արհամարհեց թագաւորների պալատի շքեղութիւնն ու փառքը, որ նորա համար պատրաստումէին վայելիլու։ Ոչ արծաթի նման փայլուն և արծաթի հանած ձայնի նման պարզ ու ակորժ փառքի ձայնը, որ Իւր ականջներին էր կրպչում, և ոչ փառաւոր ու մարդիս համար գրաւիչ ու ցանկալի հրապոյր փառաւոր իշխանութեան ու զօրութեան, որ նորա ձեռն յանձնել մշտքերում վճռած էին — ոչ մի բան, ինչ որ զգայութիւնների ազդեցութեան տակ գտնվող մարդիս սիրտը կարող է շարժել կամ փոխել, ոչ մի բան,

ասումեմ՝ այն աստուածային մարդին չհեռացրեց Իւր նպատակից։ Նա միայն Իորայէլի փրկութիւնը չէր կամենում, այլ բոլոր մարդկային ազգի։

Եւ ինչպէս որ Հանգիստ ու անվրդով սրտով թագաւորական թագն Իւրեանից հեռացրել էր, այնպէս ևս կեանքի սե սե ամպերն ու մրրիկներն Իւրեան մօտենալն տեսաւ։ Նա կճանաչէր քահանաներին, այն քահանաներին, որոնց կեղծաւորութիւնը խայտառակել էր, որոնց արած զոհերն ու պատարագները անօգուտ ու անընդունելի լինելը յայտնել էր։ Նա կճանաչէր Հասարակ ժողովրդի փոփոխամիտ ու անհաստատ բնութեան տէր լինելը, որ այսօրվան աստուածացուցածին վաղն մեռնելու է դատապարտում։ Նա գիտէր, որ իւր մօտիկ մարդիկներին մէջն ևս, իւր աշակերտներին ևս կայ անյուսալի մարդ, ինչպէս Իւր հաւատարմութիւնը շատ թեթեւ գնով ծախող Յուդա Իսկարիոտացին, գիտէր Պետրոսի փոփոխական բնութիւնը և ամենքի վախկոտութիւնն ևս։ Առաջվանից գիտէր Նա թէ ինչ վտանգների մէջ պիտի ընկնի, ինչ հարուածներ պէտքէ կրէ, ինչ չարչարանքներ պէտքէ քաշէ։— Բայց իւր գլխին դալու այս զարհուրելի բաները, որ եկան, պատահեցան, Նորան չկտրեցին։ Մի քայլ անգամ յետ չդրաւ ոտը հեռու մնալու կամ ազատվելու համար։

Ոտն յառաջ դրաւ ու այն ծանր ու դժուար քայլն արաւ, որ պիտի գնար աշխարհիս Փրկչի մօտ՝ յանձն առնելու։— Դեռ ևս բոլոր աշխարհն Նորան չէր ճանաչում, — Դեռ ևս Իւր իսկ աշակերտներն անգամ Իւրեան բոլորովն չէին հասկանում — ոչ մի մարդ չուներ Նա, աշխարհս երջանկացնելու Իւր նպատակն հասկացող — միայնակ կանգնած էր Նա աշխարհիս մէջ, աչքերն դէպ ի երկինք, դէպ ի Աստուած ձգած։ Բայց հաստատ կամքով ու աներկիւղ սրտով մօտեցաւ Նա մահի սարսափելի արհաւիրքներին։

Բայց ոչ դք թող չկասկածի, որ աշխարհս փրկող հերոսը մարդ էր մի և նոյն ժամանակ. մարդ էր ու մեզ նման զգացմունք ու փափաղներ ուներ։ Նորա սիրտն ևս արդեօք ահ ու դող չընկաւ, երբ որ՝ մահի ժամն մօտեցաւ։— Երբ որ Նա Գէթսեմանի ձիթենիների տակը ծուներ էր դնում, մանաւանդ երկիւղը սրտին մէջ, երբ որ իւր քրտինքը արիւնի կաթիլների նման գետինն էր թափվում, երբ որ Նորա բոլոր մարդկային բնութիւնն վրդովման մէջ էր, սարսափելի չարչարանքներով Իւր մեռնելուն համար, արդեօք Նա սաստիկ անհանգիստ ու նեղված սրտով չաղաղակեց առ Աստուած թէ «տրտում է հոգիս մեռնելու շուրջ»։ «Հայր իմ, եթէ հնար է, այս բաժակս թող Ինձանից անցնի»։ Բայց դարձեալ իւր հոգին յաղթեց երկրաւոր զգացմունքի ազդեցութեանը, դարձեալ յետ չկացաւ Իւր կեանքի կանոններիցն ու Իւր սուրբ նպատակից, այլ Իւր բերանից հանած խօսքին վերայ աւելացրեց վսեմ հոգով. «Բայց ոչ թէ, Հայր, ինչպէս և եմ կամենում, այլ ինչպէս որ Դու ես կամենում»։

Այսպէս անմեղութեան սկզբնատիպն չարագործներից դատապարտվեցաւ, գնաց Նա, թէ և մարմնի ոյժից ընկած, բայց Իւր հերոսական սրտի ոյժից չըն-

կած, Իւր գնալու տեղն, դէպի Գողգոթա, Իւր վերջին խօսքը, որ ասաց Նա ժողովրդին, բարութեան խօսք էր. «Նրուսագէմի աղջիկներ, իմ վերայ մի՛ լաք, այլ ձեր ու ձեր զաւակների վերայ լացէ՛ք»։ Հաւատարիմ մնալով Իւր աստուածային կոչմանն, Նորա վերջին աղօթքն ևս, որ արաւ խաչի վերայ, Իւր սպանողների համար էր։

Մարդկային արժանաւորութեան և Աստուծու հետ մի լ'նելու ինչ վտեմ՝ օրինակ է, որ տուաւ բոլոր մահականացու մարդիկների ազգին, Ամենայն առաքինութիւնները, որ այս այն մարդի մէջ հատ հատ ու ջոկ ջոկ են գտնվում, Քրիստոս մեր Փրկչի՝ մէջ մի կատարեալ ամբողջութեան ու միութեան մէջ էին սիւյլում. և ինչ առաքինութիւններ որ մինչև անգամ՝ ամենապատուական մարդիկների մէջ, պատահումէ, որ տկարութեամբ, կամ երկիւղով, կամ քաշվելով, պղտորվում են, Նորա մէջը իւր միշտ նուիրական անխառն, անպղտոր, մաքուր ու սուրբ զրութեան մէջ է. ինչ որ մարդիկների մտքով ու զատողութեամբ ճշմարիտ է ճանաչված, և ծուռն ու սխալը, առանց հետն խառնվելու, չէ լինում, Նորա խօսքի ճշմարիտն մեզ այնպէս միշտ հաստատ ու յաւիտեանական Իւր անսխալ նշանակութեան մէջ է մնում, ինչպէս մի միշտ հաստատուն և յուսալի վեմ իւր տեղն հաստատ ու անշարժ է մնում։

Ո՛վ աշխարհիս Փրկչի օրինակ. դու միշտ իմ առաջիս եղի՛ր և իմ առաջիցս գնա՛, մի լուսաւոր աստղի նման, բոլոր իմ կեանքիս ու մահիս մէջ։ Ամենայն օր Քեզ առաջիս ունենալով և Քո վերայ նայելով, նորոգվում, Ես ևս մտնէի՝ այն մեծ ու աստուածային պատերազմը իմ կ'ըրբերիս ու իմ գլխիս գալու բաներին հետ առաքինութեան, արդարութեան ու ճշմարտութեան համար, Ես ևս հոգով ցանկանումեմ Քրիստոս իմ տիրոջս, իմ Աստուծուս ճանաչել ու խոստովանել իմ գործերիս մէջ աշխարհի առաջին և ոչ մի վտանգից չվախենալով, Այն ժամանակ ես ևս կ'աղթեմ իմ կամքիս հաստատութեամբ, և իմ երկրաւոր կեանքիս վերջն բուրդեմ կարող եմ ասել, «Լաւ պատերազմը պատերազմեցի, ընթացքս կատարեցի, հաւատս պահեցի, Այսուհետեւ մնումէ՝ ինձ արդարութեան պսակն, որ ինձ իմ Տէրս, արդար Դատաւորը, այն օրը պէտքէ տայ, և ոչ թէ միայն ինձ, այլ և ամենքին, որոնք սիրումեն Նորա յայտնվիլը»։

(Թարգմ.)։

Գր. Եպ. Աղ.

ԼՕՆԴՕՆ.

Տէմզա։ Լօնդօնի մօտենալ։ Հրավէզէնդ։ Վուլփի։ Գրինվի։ Լօնդօն։ Փողոցի խոնուծիւն և շարժողութիւն։ Յայտարարութիւնների բաղադր. Փողոցի բժիշկներ և ատենախօսանք։ Թուխայեր։ Լօնդօնի մեծութիւն։ Սխալ։ Ստորեկերեայ երկամուկի։

Անհնար է ներկայացնել Տէմզա գետի բերանից աւելի կենդանի պատկեր, Միօրինակ նաւարկութեան ձանձրոյթը յանկարծ փարատվումէ և գետափը